ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԶՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ գ. Զրաշեն
հեռ 094 32 22 38
098 98 05 06

01.02. 2019 թ.

թիվ 44

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ՝ Հ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Զրաշեն համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի փետրվար ամսին արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները

Առդիր՝ 7 էջ

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԿԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1-04080-2019
01 03 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 5

<<06>> 02. 2019 թ. գ. Ջրաշեն

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Նարնե Տոնիկի Մկրտչյանի կողմից 18.12.2018 թ. հաստատված թիվ 8940 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայականի/ ժառանգական գործ թիվ 660/ և ԱՁ Սամվել Վարոսյանի 15.01.2019 թ. կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերի: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների և այն, որ բնակելի տունը կառուցված է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և որ բնակելի տան և օժանդակ շինությունների սպասարկում համար հատկացված 0.24 հա տնամերձ հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, առաջացնում սերվիտուտ, չեն խանգարում այլ անձանց իրավունքները

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Ջրաշեն համայնքի 8-րդ փողոցի թիվ 6 հասցեում գտնվող օրինական փաստացի սահմանազատված 0.2345 հա մակերեսով տնամերձ հողամասի և նրա վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված 211.7 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տուն և 0.7 քմ մակերեսով աստիճանավանդակը կառուցված 1960 թ. ճանաչել Մերուժան Արտաշեսի Մելիքյանի ծնված 04.01.1957 թ. սեփականության իրավունքը:
2. Տնամերձ հողամասում առկա 32.1 քմ մակերեսով բաց պատժգամբը, 5.1 քմ մակերեսով աստիճանավանդակը 7.25 քմ մակերեսով մառանը , 39.2 քմ և 42.2

քմ մակերեսով ծածկերը կառուցված 2015թ-ին, 7.1 քմ մակերեսով ջրավազանը կառուցված 2016թ-ին և 3.2 քմ մակերեսով զուգարանը կառուցված 2010 թ-ին համարել ինքնակամ կառույցներ:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Մերուժան Արտաշեսի Մելիքյանի սեփականության իրավունքը ամրագրված ու սահմանազատված հողամասի, բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. Համայնքի ղեկավարի 16.01.2019թ. որոշումը համարել անվավեր:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Լ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 6

<<06>> 02. 2019 թ. գ. Ջրաշեն

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17 սեպտեմբերի 2009 թվականի N 1066-Ն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով և քաղաքացի Մերուժան Արտաշեսի Մելիքյանի դիմումը այգի հիմնելու մասին:

Որոշում եմ՝

1. Մերուժան Արտաշեսի Մելիքյանին թույլատրել ՀՀ Արմավիրի մարզի Ջրաշեն համայնքում գտնվող 220-002 ծածկագիր վարելահողի վրա հիմնել պտղատու այգի (կորիզավոր):
2. Համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Լ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշեն համայնք

22, Արմավիրի մարզ, գ. Ջրաշեն, jrashen.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 փետրվարի 2019 թվականի N 7

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 7-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի մի խումբ բնակիչների դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ջրաշեն համայնքում ցածրարժեք հողատեսքերը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքերի՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:

3. Սույն որոշմամբ իրականացված հողատեսքերի փոփոխումն սահմանված կարգով արտացոլել յուրաքանչյուր տարվա համար կազմվող համայնքի հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ

«26» փետրվարի 2019թ. Թիվ 8

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2010 թվականի փետերվարի 15-ի թիվ 14 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրաշեն համայնքի բնակիչ Փաշա Զասմի Մլոյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասին՝ (ծածկագիր 0010-003) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրաշեն համայնքի 14-րդ փողոցի 3-րդ հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 9

<<27>> 02. 2019 թ. գ. Ջրաշեն

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ՝ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, ՀՀ կառավարության 13.11.2003թ թիվ 1532-ն որոշման 2-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2011թ օգոստոսի 24-ի թիվ 01/07.2/1550-11 գրությունը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Ջրաշեն համայնքում ստեղծել քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:
2. Հաստատել քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ցանկը՝ համաձայն հավելվածի:
3. Որոշման մեկական օրինակ հանձնել կազմավորումների հրամանատարներին:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
5. Ուժը կորցրած համարել համայնքի ղեկավարի 2013 թ-ի սեպտեմբերի 06-ի թիվ 20 որոշումը:

Համայնքի ղեկավար Լ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Արմավիրի մարզ գ. Ջրաշեն
Հեռ. 094 32 22 38
098 98 05 06

01.03.2019թ

թիվ 2

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գրետա Խորենի Մարտիրոսյանի մասին

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 173-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գրետա Խորենի Մարտիրոսյանի 30 հունվարի 2019 թվականի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Աշխատակազմի քարտուղար Գրետա Խորենի Մարտիրոսյանին համարել աշխատանքի 2019 թվականի փետրվարի 1-ից:
2. Գրետա Խորենի Մարտիրոսյանի աշխատավարձը սահմանել ըստ հաստատված դրույքաչափի:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԿԱՐԴԱՆՅԱՆ